


391.99
F-27



ԲԱՆՎՈՐ ՀԱՅԿ (ԳԱՅ)

ՄԱՅԱԿ ԲԻՇԱՆ

891.99
F - 27

1930

39

01 JAN 2009

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆԿՈՐ»-Ի ԳԵՂԱՐՎԵԼՍԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ № 1 DEC 2011

891-29

F - 27

ԲԱՆԿԱՐ ՀԱՅԿ (ԳԱՅ)

ԱՎ

-4

ՄԱՅԱԿ ԲԻՇԱՆ

~~ԽՈՎՈՒ
339582~~

14452-52

738

ՀԱՅԿ. ՀՐ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ԻՄԲԱԳՐ.-ՀՐԱՏ. ԱԱԱ

ՅԵՐԵՎԱՆ

1950

ՄԱՅԱԿ ԲԻԶԱՆ

(Եղեր իմ հիշողություններից)

1918 թ. Հունվար ամիսն եր:

Կաղակների ատաման՝ հայտնի արկածախնդիր գեներալ Դուրովն ապստամբվելով գեռ մանուկ Խորհրդային իշխանության գեմ, զրավել եր Որենքուրդ քաղաքը և զնդակահարել մոտ 500 բանվորների:

Քաղաքի անդեն բանվորությունը և տեղական խորհուրդները նահանջել եյին Սամարա:

Խրախուսված Դուրովի հաջողություններից, համաձայն նրա հրահանգի, Ռւրալի կողակները նույնպես ավագակախմբեր կազմած ասպատակում եյին շրջակա տափաստանները, սպառնալով զրավել ու քարուքանդանել Սամարա բանվորաչատ քաղաքը:

Խորհրդային իշխանության համար Վոլգայի ավելում ստեղծվել եյին շատ ծանր ու դաժան որեր:

Սամարայի բանվորությունը հասկճեալ զինվում եր ու կամավորական խմբերով ռազմաճակատ ուղարկվում:

Զմեռվա դաժան ու խիստ որ եր: Յես զուրս եյի գալիս Սամարայում գտնվող մեր Կարմիր գվարդիայի շտարից: Դուան շեմքին հանդիպեցի 60-65 առքեկան, աղեխառն մազերով, բարձրահասակ ու թիկնավետ մի

ՀԱՅՈՒՏԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1758
ԳՐԱՆԵՐԳԼԻՆՎԱՐ 2293 (Բ)
ՏԻՐԱԺ 6000

ծերունու, վորը կովկասցու գեմք ունեթ: Տեսնելով ինձ,
նա մոտեցավ, հանեց գլխի մեծ փոփախը և խորը գը-
լուխ տալով ասաց Հայերեն.

— Բարով, ընկեր Գայ:

— Բարե, բիճա, ի՞նչ ես ուզում, — զարմացած
Հարցրի յես:

— Էնկեր ջան, չողուդ մատաղ, մի նեղացիք, ա-
սին վոր Հայ ես, յեկա քովդ մի մեծ խնդիրքով: Շատ
եմ խնդրում, ինձ ել գրեք կամավոր ձեր շտաբում,
ինքս Հին բանվոր եմ, վաղուց գաղթել եմ Կովկասից:
Յերեկ ժողովում ասին, վոր զազախները Սամարի վրա
յեն գալիս, ընկերներս զրվեցին կամավոր ու գնացին
կովելու, յես ել եմ ուզում մեր բանվորների տերու-
թյունը, մեր Սովետը պաշտպանելու...

Ծերուկի այս պարզ ու անկեղծ ցանկությունն ինձ
Հետաքրքրեց, ներս կանչեցի նրան ու սկսեցի Հարցա-
քննել.

— Անունդ ի՞նչ ա, բիճա:

— Մացակ ա, քեզ մատաղ, իսկ բանվորները Դե-
ղուշկա յեն կանչում:

— Ե՛ լավ, Մացակ բիճա, ձուն-ձմեռ ե, ինքդ ել
շատ ծեր ես, մեր բանվորական որենքներն ել թույլ չեն
տալիս քեզ նման զառամյալ մարդկանց կամավոր գրել,
ավելի լավ չե՞ր լինի, վոր ելի գնաս քո գործով զրադ-
վես: Թող վոր ջահելները գնան կովելու, իսկ դու հան-
գտացիք:

Մացակ բիճեն իմ այս բացարությունից, ինչպես
ինձ թվաց, շատ վշտացավ: Նրա առանց այն ել կնճըս-
ված ու սեացած դիմագծերն ավելի սեղմվեցին, նա
կիսեց թավ հոնքերն ու մի խոր թառանչք քաշելով
մասց.

4

— Դե վօր եղակես ա, լսիր ընկեր: Յես 65-ի մոտ
յաշ ունեմ, ինքս բնիկ զարարադցի յեմ՝ գյուղացի:

Զահել ժամանակս պարապում եյի Հողագործու-
թյամբ, սեփական հող չունեյի, միշտ բահրայով եյի
վերցնում: Մի որ, ժամանակին հողի հարկը չտալու
համար կովեցինք կարվածտիրոջ հետ, վորին մի լավ
զնքսեցի: Այդ բանի համար ցարի կառավարությունն
ինձ մի տարի Շուշվա բերդը գրեց, վորտեղից փախա
Բագու: Բագվում 40 տարի ծառայել եմ, Բալախանում
հասարակ բանվոր եմ յեղել, շատ զարաստովկաների
յեմ մասնակցել, մի քանի տարի բանտ եմ նստել...
Հայ-թրքական կոփվների ժամանակ գաղթեցի ընտա-
նիքով Որուսաստան՝ Որենքուրդ քաղաքը: Ունեյի յեր-
կու, սարի պես տղա: Մեծ տղաս 1905 թվին սպանվեց
Յապոնական կովին, իսկ փոքր տղաս՝ կարմիրներից
եր, 1908 թվին քշեցին Սիբիր, մինչեւ հիմա յել վոչ մի
խաբար չունեմ նրանից... Իմ միակ հույսը ջահել-ջի-
վան 21 տարեկան թոռս եր, վորը ծառայում եր Որեն-
քուրդի գեղոյում: Նա յել հոր նման բոլշևիկ եր, և
Դուրովի հրամանով յերկու ամիս առաջ ազիդ բարի
մյուս բանվորների հետ միասին կախեցին զազախ-
ները...

Ծերուկը մի քանի վայրկյան կանգ առավ, իր խու-
նացած փափախով սրբեց արտասուբի կաթիլներն ու
շարունակեց: —

— Եղ որվանից մնացի անտեր-անտիբական, Որեն-
քուրդի մեր բանվորներն իրենց հետ ինձ ել Սամարա
բիթին, մի քիչ փող տիֆին և այժմ եստեղ փողոցներում
կոշիկ սրբելով, զե ենա մի կերպ ապրում եմ, ելի...
Լսեցի, վոր Դուրովի գեմ կամավորներ ես հավաքում,
մեր բանվորները բոլորն ել գրվեցին, ասի յես ել գնամ
մեռնեմ Սովետի համար... Մեկ ել իմ ազիդ թոռանս

5

վրեժը լուծեմ եղ շանվորդի Դուբովից։ Իզուր ես ինձ
ծեր համարում, կոներս ու մեջքս դեռ շատ պինդ են,
հրացանին ու գյուլին լավ ծանոթ եմ, լավ ձի նստել
գիտեմ, ոռւս-տաճկական յերկրորդ պատերազմին կա-
վալերի պոլիկի զինվոր եմ յեղել...

Ինչ ասեք կանեմ, միայն թե ազաշում եմ ինձ ել
դրեք ձեր շտաբում։

Շատ աշխատեցի քաջ ծերուկին յետ կասեցնել իր
մտադրությունից, բայց իզուր։ Վերջը տեսնելով վագ
անկարող եմ նրան համոզել, մի կերպ հեռացնելու հա-
մար ասացի։

— Լավ, Մացակ բիձա, յես հրամանատարին կա-
սեմ քո մասին, իսկ այժմ գնա։

— Հա՛, քեզ մատաղ ընկեր, ասի, բարեխոսի ինձ
համար, հրամանատարին ասի, վոր դեղուչկա Մացակը
դեռ ջահել ա, կոներն ու մեջքը շատ պինդ ա, ինքն եւ
լավ գյուլա գցել գիտի։ Յե՞րբ գամ, ընկեր Գայ։

— Լավ, լավ կասեմ, մի քանի որից յեկ...

Անցավ մի քանի շաբաթ։ Մացակ բիձի ձեռքից
հանգստություն չունեյի։ Ամեն որ, համարյա թե բո-
լոր ժամերին, ամենուրեք, շտաբի չեմքին, կամ փո-
ղոցում, սովորաբար առաջս եր ցցվում նա, ինձ համար
արդեն սովորական դարձած հարցմունքով։

— Ընկեր Ջան, բա ինչ յեղավ, ախր ինչ յեղավ իմ
հարցը...

Վերջապես, տեսնելով վոր չեմ կարողանում ազատ-
վել այդ ծերուկի ձեռքից, հայտնեցի հրամանատարիս
նրա խնդիրքը։ Ի հարկե նա մերժեց վերցնել նրան։

Ենք վորովհետեւ Մացակ բիձան, այս անգամ ար-
գեն իր կոշիկ մաքելու արկղը տեղավորել եր մեր
շտաբի գիմացը, հրամանատարը ես, 10-15 որից հետո

ձանձրանալով նրա սովորական «ընկեր, բաս ինչ յեղավ»
խոսքերից, զիջեց և նրան ընդունեց կամավոր՝ ախո-
ռում, ձիաներին նայելու պաշտոնով։

Անցավ մոտ մի ամիս։ Մացակին բոլորովին մոռա-
ցել եյի։ Մեր արշավը մոտ եր, և արդեն կազմա-
կերպված բանվորական վաշտերն սկսել եյին հրացա-
նաձգության փորձեր կատարել։ Ամեն որ տղերքը վաշ-
տերով գնում եյին քաղաքից դուրս, լեռան տակ հրա-
ձգության ու ձիավարժության։

Առաջին որը գնացի և յես։

Յերբ թիրախներն արդեն պատրաստ եյին ու
բանվորական վաշտերը, նոսրացած շարքերով պառ-
կած սպասում եյին կրակելու հրամանի, չգիտեմ, վո՛ր-
տեղից, նորից Մացակ բիձան ցցվեց առաջս, այս ան-
գամ արդեն զինվորական հագուստով, վորն, իհարկե,
նրան շատ եր սազում։

— Ընկեր Գայ, հրաման տուր ինձ եւ հրացան առան
կրակելու, ՅՆ տարի յե գյուլա չեմ գցել, տեսնեմ, աշ-
քիս լույսը հո չի խավարել։

— Լավ, Մացակ բիձա, այժմ հեռացիր, մի խան-
գարիր, հետո կասեմ՝ կտան։

— Զե, ընկեր Ջան, հոգուդ մատաղ, թող յես գցեմ
առաջին գյուլան։

Տեսնելով, վոր չեմ ազատվելու այս կամակոր ծե-
րուկից, կարգադրեցի տալ նրան հրացան և 5 փամ-
փուշտ և ապա մոտ կանչելով ասացի։

— Տեսնո՞ւմ ես, Մացակ բիձա, ա՛յ այն յերկու մեծ
թիրախները, վորոնք այստեղից 800 քայլ հե-
ռու յեն, նրանց մեջտեղում հազիվ թե յերեսում են կո-
լոր ու սե փոքրիկ գնդեր։

— Տեսնում եմ, լավ եմ տեսնում...

— Ահա այդ սե գնդերին պիտի խփես։ Յեթէ ուշ նեցածդ ծ փամփուշտից առնվազը Յ գիպչեն, ուրեմն քեզ հետս կտանեմ պատերազմ, իոկ յեթէ վոչ, կմնաս այստեղ ախուռում ձիերին նայելու, հասկացա՞ր, զե սկսի՞ր։

Զլապինդ ծերուկը մի ակնթարթում նայեց ուշադրությամբ թիրախին չոքեց, ուղղեց նշանացույցը և առանց մի խոսք ասելու մեկը մյուսի հետեւից կրակեց տվածու փամփուշտները։

Կամավոր բանվորներն արդեն հավաքվել եյին մեր չուրջը և հետաքրքրությամբ դիտում եյին ծերուկի շարժումները, մերթ ընդ մերթ խրախուսելով իրանց Դեկուշկային։ Յես նայում եյի հեռագիտակով և նախքան թիրախներն ինձ մոտ բերելը, արդեն նկատել եյի, վոր ծերուկն իսկապես վոր լավ նշան խփող ե։ Յանկանալով փորձել ծերուկին, ասացի։

— Ե՛, Մացակ բիծա, բանդ խարաբ ա, գնդակներն իզուր անցան, փոխանակ թիրախին խփելու, սամի լանջից միայն փոշի հանեցիր։

Խեղճ Մացակն իմ այս խոսքերից քիչ մնաց վոր լաց լիներ, նա հանցանք գործած յերեխայի նման գլուխը կախեց, վայր դրեց հրացանը, վեր կացավ և ուզում եր գնալ։

Հենց այդ բապեյին բանվորները թիրախը վեր բարձրացրած հեռվից արդեն սկսել եյին բղավել «կեցցե՛ մեր Դեկուշկան, Յ գնդակն ել խփել ե»։

Պետք եր տեսնել Մացակ բիծայի գեմքն այդ բոպեյին։ Նա մանուկի պես ուրախությունից ցատկուում եր իմ շուրջը և կրկնում։

— Բնիեր Գայ, կտանես չե՞ պատերազմ, ախր խոսք ավիր, կտանես չե՞։

— Լավ, լավ, Մացակ բիծա, կտանեմ հետս, միամիտ յեղիր, — ասացի յես ու անցա մյուս վաշտերը հըրամգության հրամաններ տալու։

Հեռվից յես լսում ու տեսնում եյի, թե ինչպես բանվորներն ուրախ բացականչություններով խեղճ Մացակ բիծային ճոճում եյին իրանց ձեռքերի վրա։

Յերկու որից հետո, մեր առաջապահ ձիավոր խմբի պետ ընկ։ Յ-ի գրավոր խնդրի համաձայն, գեղուշկա Մացակը վորպես առաջնակարգ ձի նստող ու գնդակ զցող, և վորպես Որենբուրգի շրջակայքին լավ ծանոթ-վաւագ, ուղղմարեմ ուղարկվեց։

Փետրվարի 23-ն եր։ Սարսափելի սառնամանիք։ Առավոտյան ժամը 6-ից աեղի յեր ունենում անհավասար ճակատամարտ մեր Սամարայի բանվորական դրուժինայի և տասն անգամ թվով ավելի Դուրովի հետեւակ ու ձիավոր կողակների միջև։ Թշնամուց նախընթաց որը խլած Սարուչինսկայա մեծ կայարանի շրջակա լեռներում ամրանալով, մեր բանվորները պաշտպանվում եյին հերոսաբար։ Թշնամին պաշարել եր մեզ յերեք կողմից, և նրա անհատնում գնդակների տարափը վորպես զարնան կարկուտ, անխնա թափում եր մեր դիրքերը։ Գլուխ բարձրացնելու հնարավորություն չկար։ Ուրալյան լեռնաշղթայի սոսկալի ցուրտը միախառնվելով թշնամու թնդանոթների գնդակների դժվարոցի հետ, մեզ ուղղակի ջղայնացրել եյին, մենք համարյա թե սառել եյինք մեր դիրքերում։

Դժբախտաբար կովի ամենատաք ժամին, փամփշտաբեր զինվոր Վասյան գյուղի ճանապարհին խըփվեց, թողնելով մեզ անելանելի դրության մեջ։ Մեր դիրքերից գեղի Սարուչինսկայա կայարան տանող միակ ճանապարհի վրա, վորը և մեր նահանջի միակ ուղին եր, թշնամու կողմից տեղում եր գնդացիրների ու թըն-

դանոթների շրապնելի տարափը։ Մեր փամփուշտները հատնելու վրա եյին, կամավորների մոտ մնացել եր ընդամենը 10-ական փամփուշտ, իսկ գյուղից բերելը թե անհնար եր և թե խիստ վտանգավոր։

Յես պարզորեն զգում եյի ստեղծված ծանր կացությունը։

— Ո՞վ կարող ե գնալ Սարոչինոկայա կայարանը փամփուշտ բերելու, —բարձրաձայն հարցը ի յես, ձյունի խրամատների մեջ դիրք մտած մեր կամավորներին։ Զայն տվող չեղավ։ Հարցս կրկնեցի նորից ավելի բարձր ձայնով։ Միայն թշնամու մոտեցող համազարկերն ու կողակների վայրենի աղաղակները յեղան իմ պատասխանը… յես հուսահատության մեջ եյի։

— Վերջապես, միթե չկա՞ ձեր մեջ քաջասիրտ մեկը, վոր կարողանա շուտով մեզ փամփուշտ հասցնել ու բոլորիս փրկել, —համարյա թե գոռացի յես հուսահատությամբ։

— Յես կերթամ, մի հուսահատվիր ընկեր Գայ— լացի յես աջ կողմի խրամատներից մի ձայն։

Մացակ բիծան եր այդ, վորը սողալով մոտեցավ ինձ։

— Մացակ ջան շուտ… բղավեցի յես, և դեռ խոսքս չվերջացած վայր ընկա ձյունի վրա, շշմած թշնամու շրապնելից, վորը պայթեց մեզնից 20 քայլ հեռավորության վրա, ջարդելով մի գնդացիր, 4 հրացան ու վիրավորելով 8 զինվորի։

Յերբ վառողի ծուխն ու թնդանոթի գնդակից ոդք բարձրացած ցեխի ու ձյունի փոշին անցավ, քչվելով վաղորդյան սառը քամուց, յես նկատեցի Մացակ բիծային, վորն ոճի ճկունությամբ թշնամու գնդակների տակ ցած եր սողում յեռան գլխից…

Անցավ մի ժամ։ Մացակը չկար ու չկար։ Յես ապրում եյի անտանելի յերկար ու հոգեմաշ բողեներ։ Մեր դրությունն արգեն կրիտիքական եր դարձել։ Կողակների հորդաները խրախուսված մեր լուսթյունից, դուրս յեկան իրենց դիրքերից և սողալով սկսեցին վեր մագլցել։ Մենք հեռու եյինք միմյանցից համարյա 150-200 քայլ։ Կամավորներից շատերը վայր գնելով իրենց հրացանները, ինձ եյին նայում հարցական հայացքով, յես զգում եյի, վոր նրանք փամփուշտ շոնենալու պատճառով, տնհամբեր սպասում եյին նահանջի հրամանին…

Բայց նահանջելն արգեն անկարելի յեր։

— Տղե՛րք, թշնամին շատ մոտ ե, հազցրեք սվիներն ու պատրաստվեք սվինամարտի—կամ կմեռնենք, կամ կհաղթենք, շուտ—բոռացի յես, հանելով առճանակս։

— Բերի՛, բերի՛, —հանկարծ լսեցի Մացակ բիծայի խրխոտ ձայնը։

— Կեցցե՛ս ծերունի մարտիկ, —մրմնջացի յես և հետ գառնալով տեսա սողացող Մացակ բիծային, վորի փափախը չկար, իսկ գլուխն ու ճակատը փաթաթված եյին վիրակապերով։

— Ընկեր Գայ, բերի փամփուշտները, եղ շան վորդիքը, յես դրանց… գյուղը չհասած գլխիս ալին գնդակով, իսկ «փելչերը» ուշացրեց, թե չե շուտ կզայի, —ասաց նա, միաժամանակ քարչ տալով իր հետեւից յերկար պարանի ծայրին կապած յերկու մեծ մեշոկ փամփուշտներ։ Վաշտս փրկված եր…

Մենք արգեն մոտեցել եյինք Որենբուրգին։ Ընկեր Տ-ի ընդհանուր հրամանատարությամբ։ Սամարայի և Որենբուրգի բանվորական դրուժինաները հե-

Թամարար կովում եյին քաղաքեց 5 վերստ հեռու գլու-
նքող բլուրների վրա: Աւրալի և Որենբուրգի կողակները
գաղանային կատաղությամբ պաշտպանում եյին իրենց
վերջին գիրքերը: Տեղի յեր ունենում սոսկալի, բայց
ֆառական ժարու: Յերկու կողմից չատ մեծ թվով սպան-
վածներ ու վիրավորներ կային, վորոնք անխնամ թափ-
կած եյին գետին: Շրջակա ճերմակ ձյունը տեղ-տեղ
կարմրել եր թափված արյունից... Սամարայի ու
Արենբուրգի բանվորական դրուժինաները կովում եյին
կողք-կողքի և այդ դրուժինաների կամավորներն աշ-
խատում եյին հերսոսական արշավանքով միմյանցից հետ
չմնալ: Հեռվից լսվում եյին քաղաքի յեկեղեցիների
զանգերի վողբածայն զողանջները, վորոնք մահվան
սոսկումով նախազգուշացնում եյին բուրժուազիային
կարմիրների հաղթական արշավի մասին:

Բուրժուազիան գլուխը կորցրած փախչում եր քա-
ղաքից...

Կոիվն սկսել եր վաղ առավոտից և մինչև յերեկվա-
ժամը 2-ը գեռ իր վախճանին չեր հասել:

Կովի ամենատաք ժամին, հարևան Որենբուրգի
դրուժինայից հայտնեցին, վոր մեր ընդհանուր հրա-
մանատար բոլորիս սիրելի ընկեր Տ-ն խփեց գիրքե-
րում, և վոր այդ դրուժինայի մի քանի մասերում իրա-
րանցում ե նկատվում: Հանձնելով Սամարայի դրուժի-
նայի զեկավարությունն ողնականիս, յես սողալով ան-
ցա հարեւան դրուժինան, վորտեղից լսվում եր ականջ
իրացնող ուսուաների, համազարկերի և զնդացիրների
ձայներ:

— Բնկեր հրամանատար, մի խումբ ձիավոր կու-
տակներ, մոտ 300 հոգի, անցել են ձախ թեգից Որեն-
բուրգի դրուժինայի թիկունքը, — լսեցի առաջին հար-
յուրապետի զեկուցումը:

— Եռառով յերկու հարյուրակ Սամարայի գլու-
նքութիւնայի պահեստից այնակ ուղարկել, — կարգագրեցի
յես ու անցա Որենբուրգի դրուժինան—բանվորներին
խրախուսելու:

— Բնկեր Գայ, կուլակները հակահարձակման չարք
են կազմում ահա այս բլուրի տակ, — ցույց տվեց ինձ
մի բանվոր:

Յեկ յերբ գլուխս բարձրացնելով ուղում եյի հեռա-
գիտակով նայել կամավորի ցույց տված բլրին՝ տը-
բ-բ-ա-խ-կ, հանկարծ մի ծանր բան դիպավ գլխիս, աչ-
քեքս մթնեցին, յես թափալվեցի ձյունի վրա: Զնայուծ
դիմիցս հոսող տաք արյունը ծածկեց ամբողջ գեմքս ու
ականջներս ել ինքնայեռի պես դժգժում եյին, այնու-
ամենայնիվ պարզ կերպով լսեցի նորից Մացակ բիձայի
խրոխտ ձայնը.

— Բնկեր Գայ, քեզ մատաղ, մի վախիր, եսուեղ եմ:

Արյամբ ու ձյունով շաղաղված աչքերս մի կերպ
բաց արի, տեսա Մացակին, վորն առյուծի պես, չոքած
մի քանի ընկերների հետ, մեկը մյուսի հետեւից ցած
եյին գլորում լեռան լանջից վեր մագլցող կողակներին: Միաժամանակ յես լսեցի հաղթական ուռա՞ների ձայ-
ներ, այդ մեր Սամարայի դրուժինան եր, վորը հակա-
հարձակման դիմեց:

Յես ուշքս կորցրի...

Յերեք ժամ անց, յերբ պատգարակներով Որեն-
բուրգ եյին տանում ընկ. Տ-ի դիմում և ինձ, վերքի ցու-
վից յես աչքերս բաց արի ու տեսա Մացակ բիձային,
վորն իր սիրած նժույգը հեծած , գլուխն ու աջ ձեռքի
մեծ մատը կապած, զնամ եր կողքիցս ու քթի տակ
չդիտեմ ում հայհոյում...

Տեսնելով, վոր ոչքերս բացի, նա ժպատց, ձին

մոտ քշեց պատգարակիս ու կռանալով թամքի վրա հարցրեց. —

— Քեզ մատաղ, լավ ե՞ս, մախորկա տամ կքաշե՞ս:

Յերբ յես ծխում եյի նրա հրամցրած մախորկայի գլանակը, նա նորից կռացավ դեպի ինձ ու ասաց. —

— Ե՞ս, փառք աստծո, դու լավ պրծար, բայց նա... նա միաժամանակ մատով ցույց տվեց՝ հրամանատար ընկ. Տ-ի պատգարակը, թափափհարելով իր ալեղարդ գլուխը:

Կյանքու փրկված եր և ինչպես հետո իմացա, գլխավորակն ընորհիվ Մացակ բիճայի հոգատարության:

1919 թվին եր:

Վերջին անգամ Մացակ բիճային յես հանդիպեցի Որենքություն: Նա նորից վիրակապի մեջ եր, միայն այն տարրերությամբ, վոր այս անգամ կապված եր նրա ձախ թեփը, իսկ լայնալանջ կրծքից կախել եր «Կարմիր դրոշի» պատվավոր շքանշանը:

Ինձ տեսնելով, նա շատ ուրախացավ, մոտեցավ հարցրեց առողջությունս ու իմ սիրած մախորկան հրամցրեց: Իմ հարցին, թե ինչպե՞ս են նրա վերքերը և նրա առողջությունը, նա գլուխը թափափհարելով ասաց.

— Ե՞ս, ես աշխարհում լավերն են միայն մեռնում, չգիտեմ թե ինչու գյուլան ինձ չի սպանում...


Մի քանի որից հետո, յերբ յես կրկին վիրավորված սանիտարական գնացքով մեկնում եյի Մոսկվա, Մացակ բիճան կռացավ, ամուր սեղմեց ձեռքս ու ասաց.

— Ընկեր ջան, շուտ լավացիր, յեկ, քեզ հետ միտսին ելի կովի պիտի զնամ, կտանես չե՞ ինձ քեզ հետ:

— Իհարկե, իհարկե, Մացակ բիճա, քեզ նորից կը տանեմ, դու ել շուտ լավացիր. . .

Այժմ, վորքան գիտեմ, Մացակ բիճան զեռ կենդանի յեռ ապրում ե առաջվա պես Որենքություն: Նա այժմ թե աշխատանքի և թե ուազմի հերոս ե: Ընկերները պատմում են, վոր նա ծերությունից արդեն բոլորովին կռացած, ձեռնափայտը ձեռքին, յերկու պատվավոր շքանշանները կրծքին հաճախում ե յերբեմն բանվորների ու կոմյերիտմիության ժողովները, վորակող դողդոջուն ձայնով պատմում ե, թե ինչպես 1917—18 թվերին բանվորները մեծ զոհեր տալով վերցրին Որենքությն ու ջարդեցին Կոլչակին:


Պատիվ 75-ամյա քաջ ծերունուն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0326856



23744